Սայաթ Նովա

Կիսամուրազ մի՛ սըպանի

Էսպես լավ գարեհլիի Ձայնով է:

Կիսամուրազ մի՛ սըպանի,
Ձունքի արիր սեր, նազա՛նի,
Թե քիզ ավել յադ յար սիրիմ,
Ումբրըս չանիմ խեր, նազա՛նի:

Աշխարումըս դուն իմ ջան իս,
Դուն իմ շահ իս, սուլթան, խան իս,
Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս
Հազըրեն մե ջեր, նազա՛նի:

Ղարիբ դավրիշ իմ, հաջ չու՛նիմ,
Գըլխիս էրծաթե թաջ չունիմ,
Յիս քիզ ավել իլլաջ չունիմ,
Դուն դառի ինձ տեր, նազանի:

Կըռակ տըվիո՝ կրակեն ավել,
Ձախմախ էլ ունիս դուն, ցավ էլ
Աշխարումըս քիզնից ավել,
Օվ ասավ՝ թե կէր, նազա՛նի:

Սայաթ Նովեն իմ, ճար չունիմ,

Յիս վառրեմեն մե խար չունիմ,
Թե դուն ասիր յադ յար չունիմ.
Իղրարրդ էտ էր, նազանի: